

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N 408-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

\_\_\_\_\_ի 2019 թվականի N \_\_\_\_\_-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ  
11-Ի N 408-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

-----  
-----  
Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության  
կառավարությունը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի  
մարտի 11-ի «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն»  
պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու, «Կրթական  
տեխնոլոգիաների ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային  
կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» N 408-Ն  
որոշման 5-րդ կետում և որոշման հավելվածի 14-րդ, 16-րդ կետերում և  
20-րդ կետի «ա» ենթակետում «կրթության և գիտության» բառերը  
փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը  
հաջորդող օրվանից: